

**ԾՈՎԻՆԱՐԻ ԿԵՐՊԱՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ
«ՍԱՍՆԱ ԾՈԵՐ» ԷՊՈՍԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ**

**Ա. Ա. ՂԱՐԻԲՅԱՆ
ԳՊԴ դասախոս**

«Սամանա ծոեր» էպոսում ազգային ակունքների և դիմագօթի կրողներից մեզ Ծովինարն է, որը վիպական մակարդակում ընկալվում է ազգաներ, հայրենանաեր հայ կնոջ կերպար, ով պատրաստ է զնայ ինքնազոհողության, որպեսզի «մեկ ջանի համար, սաղ ազգը չկոտորվի»:

Մյուս որակը, որ մենք տեսնում ենք այդ կերպարի մեջ, դարձյալ որպես ազգային դիմագօթի դրսուրում, դա քրիստոնյա հայ կնոջ կերպարն է, ով ամուսնությունից առաջ պայման է դնում Խալիֆի առաջ, որ իր հավատը չի ուրանալու: Խալիֆը նրա պահանջը ոչ միայն չի մերժում, այլ նույնիսկ հանդուրժում է քահանային և աղոթատեղի և կառուցում նրա համար:

Քաջորդ վիպական կարևոր մոտիվը, որ էպոսում դարձյալ ընկալվում է որպես ազգային արժեք կամ որակ՝ մոր կերպարն է կամ էպոսի տրամաբանության՝ հայ մոր կերպարն է: Ծովինարը մեր էպոսում մոր դասական կերպար է, որը ոչ միայն ծնում է զավակներ, այլ իր կյանքի զնով հոգ տանում և պաշտպանում է նրանց, մինչև նրանց «չափահաս» դառնալը, չափահաս տարիքում օգնում է նրանց իր խորհուրդներով, փորձում է նրանց հենարան լինել և պաշտպանել ոչ միայն կրօպաշտ հորից, այլ նաև մեկին մյուսից:

Վեպում Ծովինարի կերպարը իր տեղային կամ ազգային որակներով համերձ, առանձնանում է նաև ընդհանրապես ընդհանուր առասպելական հատկանիշներով, որոնք բնորոշ են տարբեր ժողովուրդների նույնատիպ առասպելներին: Սասանավորապես պետք է նշել երկվորյակ եղբայրների մոր գործառույթը, որը հայ բանագիտության մեջ ուսումնասիրվել է բազմաթիվ ուսումնասիրողների կողմից: Այս եմբատերսատում, անդրադարձ է կատարվել կերպարին բնորոշ մի շարք հատկանիշներին՝ սուրբ կույսի հղիության մոտիվին, աճպրոպային հատկանիշին, տարբեր խորհրդանիշ կենդանիների կամ իրերի՝ ծիու, ցլի, ցորենի հատիկի հետ կապին, ջրային տարերքի հետ առընչությանը, թափառող հերոսուհու հատկանիշներին և այլն:

Էպոսի բոլոր կին հերոսուհիները իրենց ծագումով առասպելական կերպարներ են, և այս առումով չափազանց հետաքրքիր է դարձնում դիտարկել նրանց յուրաքանչյուրի շուրջ հյուսված միջադեպերի շղթան, որոնք հնարավո-

րություն են տալիս քննության ենթարկել կերպարին և՝ ընդհանուր վիպական-առասպելական, և՝ տեղային-տիպաբանական մակարդակներում:

Մասնավորապես այս շարքում շատ առանձնանում է Ծովինարի կերպարը, որի շուրջ հյուսված մոտիվները աչքի են ընկնում ինչպես վերը նշված մակարդակներով, այնպես էլ էպոսի տվյալ տիպաբանական խմբի տարածքային վիպասանության հետ ընդհանուր աղերսների քննության առումով, ինչը առանձին ուսումնասիրության նյութ է: Այսպիսի քննությունը բազմաթիվ հարցերի հետ մեկտեղ կարող է որոշակիացնել կերպարի ծագման և տարածման հարցերը: Այդ է պատճառը, որ մենք սույն աշխատանքում անդրադառնում ենք վիպական մակարդակում Ծովինարի կերպարի համեմատական քննությանը, այն քննելով Մոկսի և Մշո տիպաբանական խմբերի պատումների շրջանակում:

Ընդհանրապես հերօսությիմերի համեմատական քննության հիմքում մենք ուղղորդվում ենք մի սկզբունքով. նախ՝ հաշվի ենք առնում այն հիմնական մոտիվները, որոնք ընդհանուր են բոլոր տիպաբանական խմբերին, ինչին հայ էպոսագիտության մեջ բազմիցս են անդրադարձել, երկրորդ՝ նկատի ենք ունենում այդ խմբերից յուրաքանչյուրին բնորոշ մոտիվները և երրորդ՝ դիտարկում ենք այն մոտիվները, որոնք տիպական կամ բնորոշ չեն կերպարին:

Այս տրամաբանությունից ելնելով՝ նկատելի է Ծովինարի շուրջ հյուսված ընդհանուր մոտիվների հետևյալ շարքը.

- Կռապաշտ թագավորը զորեղ է, և խաչապաշտ թագավորը հարկատու է նրան:
- Կռապաշտ թագավորը ցանկանում է ամուսնանալ խաչապաշտ թագավորի աղջկա հետ:
- Խաչապաշտ թագավորը աղջկան չի ցանկանում տալ կռապաշտին:
- Աղջիկը պայման է դնում կամ ժամանակ է խնդրում կռապաշտից (40 օր, 1, 7, 10 տարի), որը համաձայնում է պայմաններին:
- Որոշ ժամանակ հետո աղջիկը դուրս է գալիս գրոսնելու ծովի ափը, որը Աստծու հրամանով բացվում է, և աղջիկը հղանում է երկու բուռ ջուր խմելով՝ մեկը՝ լիքը, մյուսը՝ կիսատ:
- Կռապաշտ թագավորը նրան ժամանակ է տալիս, որ երեխաները ծնվեն:
- Քահանան կամ քեռին գաղտնի, թոնիրի վրա կնքում են տղաներին, մեկի անունը դնում են Սանասար, մյուսինը՝ Բաղդասար/Աղրամելիք/Ասիմելիք:

- Տղաները օրով են մեծանում:
 - Կուռքերը մատադ են ուզում տղաներին:
 - Եղբայրները կոտորում են կուռքերին և սպանում թագավորին:
 - Եղբայրները վերցնում են իրենց մորը /քահանային, քեռուն/ գալիս են Գագիկ/խաչապաշտ թագավորի մոտ:
 - Եղբայրները կառուցում են իրենց բերդը:
 - Բերդի անունը ծերունին /քեռին, տարբեր թագավորներ/ դնում է Սասուն:
 - Եղբայրները աղջկա նամակի պատճառով մենամարտում են:
- Երկրորդ խնդիր մոտիվները երկու տիպարանական խմբերում ել հետաքրքիր առանձնահատկություններ են հանդես բերում:

Մոկսի պատումներում գործում են հետևյալ մոտիվները.

- Ճարկահանները տեսնում են խաչապաշտ թագավորի աղջկան և հայտնում են կռապաշտին:
- Խաչապաշտ թագավորը և նրա մարդիկ համաձայն չեն աղջկան տալ:
- Աղջիկը կամավոր է գնում, որ երկիրը չավերվի:
- Եղբայրները մանկական չարաճճորթյուններ են անում. բարդու ծառի վրա շարում են երեխաներին և բաց են թողնում, ձիերին թիմարում են, կաշին հանում են, և անասունները սատկում են:
- Թագավորը նրանց ուղարկում է վիշապի դեմ կրվի, որին սպանում են մեջը ծակ կլոր քարերով:
- Ազմու թագավորը ուզում է սպանել մորն ու տղաներին:
- Սանասարը ծովի միջից ծեռք է բերում ձիուն, թուրը և ջրից հղորանում է:
- Բաղդասարը տեսնում է սարը ելել է սարի վրա գալիս է, վախից լաց է լինում:
- Եղբայրները փախչում են քեռանց տուն:
- Սանասարը սպանում է լճի միջի Բալաբայան ջանավարին և իր թրով կաշին քերթում է:
- Բաղդասարին կռապաշտը խմեցնում է և ուզում է սպանել, Սանասարը օգնության է հասնում Եղբորը, ազատում է վտանգից, սպանում կռապաշտ թագավորին:
- Եղբայրները իրենց տունը սարքում են մի վերունի սարի մեջ:
- Եղբայրները տունը սարքելուց հետո իրենց համար աղոթատեղի են սարքում:

- Մայրը ինքն է ցանկանում կամ քեզուն է կանչում եղբայրներին հաշտեցնելու:

Ինչպես նկատում ենք Մոլոկի պատումներում շեշտվում են մի շարք մոտիվներ, որոնք իմանականում (եթե չհաշվենք ասացողների մոռացության և մոտիվները խառնելու դեպքերը) բնորոշ են այս խճին, մասնավորապես. միշտ առկա է խաչապաշտ և կրապաշտ հակասությունը (ՍԾ Ա, պատում 3, 4, 7, 10, 11, 12, 19, 20, 22, 23, 24, 25), խաչապաշտ թագավորի աղջիկը անուն չունի, այսինքն Մոլոկի պատումներում Ծովինարի անունը չկա: Աղջկան տեսնում են հարկահանները, այստեղ հարկահանության փաստը ընդգծում է: Աղջկա հետ հայրը քահանա/վարդապետ է դնում կամ քեզին է գնում որպես հարսնախապեր, որպեսզի թոնիրի վրա կնքի և անուն տա Եղբայրներին: Աղջիկը չի կենակցում կրապաշտի հետ, սակայն հայտարարում է, թե նրա շնչից է հղացել: Եղբայրներից մեկի անունը Սանասար է, մյուսինը՝ Բաղդասար: Սանասարը մտնում է ծովի մեջ, ջրից հղորանում և դուրս է գալիս Քուռօկիկ Զալալու հետ միասին, Բաղդասարին կրապաշտը հարրեցնում է և ուզում է սպանել, Սանասարը օգնության է հասնում Եղբօրը, ազատում վտանգից և սպանում կրապաշտ թագավորին: Եղբայրները իրենց տունը շինում են մի վերոնի սարի մեջ և ոչ թե ջրի ափին, տունը սարքելուց հետո իրենց համար աղոթատեղի են սարբում:

Մշտ պատումներում գործում են հետևյալ մոտիվները.

- Մինամքյար թագավորի համար Ծովինարին փախսնում է թոփալ Գոգեն:
- Աղջիկը կենակցում է կրապաշտի հետ և ծնվում են Եղբայրները:
- Տղաներից մեկի անունը դնում են Սանասար, մյուսինը՝ Արամելիք/Աղրամելիք:
- Կրապաշտ թագավորը հարձակվում է խաչապաշտ թագավորի վրա, զորքը կոտորվում է, շահը իր երկու որդիներին «Զոջ կուռքին» մատադ է խոստանում:
- Սենեքերինը պաշարում է Երուսաղեմը, պարտվում է, դկին՝ Շամաուղտին հեծած՝ փախչում է:
- Մայրը՝ Արմաղանը, խորիուրդ է տալիս որդիներին, որ փախչեն Երկրից:
- Մայրը պաշար է դնում որդիների հետ:
- Եղբայրները իրենց մոր և քեզի Թորոսի հետ միասին իջնում են Մեղրագետի վրա:
- Մոր խորիուրդ քեզիները /Գորգիկն ու Թորոսը/ տղաներին տալիս են Ծովասարը, Մարաթուկն ու ճապաղջուրը:

- Եղբայրները ծառայության են մտնում տարբեր թագավորների մոտ, մի քանիսը /Արգորում, Կարս/ խալիֆից վախենալով՝ մերժում են, մյուլսերը՝ ընդունում /Մելքոն, Արամելիք/:
- Աղրամելիքին կուրքերը հանգիստ չեն տալիս, վերադառնում է կրապաշտ հրո մոտ, ջարդում է կուրքերին և սպանում է նրան:
- Թագավորները եղբայրներին վարպետներ և բանվորներ են տալիս, որ իրենց տունը կառուցեն:
- Սանասարը Համդու դիմոց ազատում է Քառասուն Ծամ Գոհարին:
- Եղբայրները խալիֆին չեն սպանում:

Եթե ընդհանրացնենք, ապա՝ Մշո պատումներում, ի տարբերություն Մկի պատումների, հիմնականում հանդիպում են հետևյալ միջադեպերը. որոշ պատուրմներում աղջկա անունը Ծովինար է (ՍԾ, Բ, 1-ին մաս, 135, 141): Աղջիկը կենակցում է թագավորի հետ (ՍԾ, Բ, 1-ին մաս, 7, 49, 136, 279, 253, 359), այսինքն ջրային ծնունդը այդքան չի շեշտվում: Տղաներից մեկի անունը դնում են Սանասար, մյուսին՝ Արամելիք/Սսիմելիք: Եղբայրները իրենց բերող սարքում են զորավոր աղբյուրի ակունքին, թագավորները նրանց բանվորներ և բնակիչներ են տալիս, եղբայրները նախ բնակիչների տներն են կառուցում՝ ուտելիվ նրանց ամրող հացը, հետո՝ իրենց բերողը: Եղբայրներից մեկը տանջվում է երազներից. Վերադառնում է կրապաշտ հրո մոտ, սպանում նրան:

Երրորդ խումբ պատումներից կարելի է առանձնացնել մի քանի առանձին մոտիվներ, որոնք միայն մեկ անգամ են հանդիպում և մասամբ շեղվում են ճյուղի ընդհանուր տրամաբանությունից:

Կաճեցի Յովան Զոհրաբյանի (Մոլո) պատում (ՍԾ, Ա, 1092) խաչապաշտ թագավորի աղջիկը հղանում է ջրից, հայրը չի հավատում աղջկա անմեղությանը. աղջիկը փախչում է Սասնո կողմերը, ուղարկում է նրան երկվորյակ եղբայրները, այսինքն այստեղ աղջիկը հալածվում է իր հորից:

Գավաշեցի Համբարձում-Խապո Գրիգորյանի (Մոլո) պատում (ՍԾ, Ա, 984) մայրը կլոր հացեր է թխում, տալիս որդիներին, որոնք ճանապարհ են ցույց տալիս՝ հասնելով ծովի ավագին.

-Տարեք ենա սարի գալոխ, գալորեք, ասեք.

«Նըճռախսոտի՝ կ, պաս գանա՝, արի՝ զատիկ,

Արի՝, մտի իմ խոր, մոր թանի թասիկ»:

Գալորվան խացեր, զացին ծովու ավագ:

Մոլկացի Սախոյի պատումում (ՍԾ, Ա, 311) մայրը ոչ միայն չի պաշտպանում տղաներին կրապաշտ թագավորից, այլև համաձայնում է նրա առաջարկին.

-Քո տուն չավոր, վրի՝,

Իմ տղեկնիր քո տղեկնիր չը ՞ն,

Տա՛ր, երա՛ մատաղ:

Յայոցձորցի Կազարյան Թառոյի պատումում Սասմա Աստղիկ թագավորի աղջկա անունը Սառա է, որը երկու բուռ ջուր է խնում ձիու ոտնատեղից և հղանում (ՍԾ, Ա, 1029):

Մարտունեցի Մելիք Գևորգյանի պատումում (ՍԾ, Գ, 446) աղջիկը հրանում է Սևանի կղզու Կարողիկոսի տված ցորենի երկու հատիկից:

Սույն աշխատանքի շրջանակներում քննության չենթարկեցինք Սասմա պատումները, որոնք նոյնպես առանձին քննության նյութ են:

Մոտիվների քննության այս եղանակը մեզ հնարավորություն է տալիս հետագայում առավել խորը և հանգանանալից անդրադարձ կատարել Ծովինարի կերպարի առասպելական ակունքներին և աղերսներին, ինչը սույն աշխատանքում մեր նպատակներից դուրս է:

Բանալի բառեր - էպոս, կամայք, Ծովինար, պատում

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ОБРАЗА ЦОВИНАР НА ОСНОВЕ ЭПОСА “САСНА ЦРЕР”

А. А. ГАРИБЯН

Преподаватель ГГУ

В работе представлены циклы мотивов вокруг образа Цовинар на основе типологических групп рассказов Мокса и Муша. Мотивы представлены тремя группами: общие мотивы, присущие в основном всем типологическим группам, мотивы, присущие только данной типологической группе, и мотивы, не присущие общей логике образов.

COMPARATIVE ANALYSIS OF THE CHARACTER OF TSOVINAR ACCORDING TO THE NARRATIONS OF THE EPIC “DAREDEVILS OF SASUN”

A. A. XARIBYAN

GSU lecturer

The article elucidates the line of motives on the character of Tsovinar according to the typological groups of narrations of Moks and Mush. The motives are represented by three groups: general motives, which are found in all typological groups and motives which are characteristic of only that typological group. The third type of motives is not typical of the general logic of the character.